ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ
ՀԱՐՑԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
«ԽԱՐԲԵՐԴԻ ՄԱՍՆԱԳԻՏԱՑՎԱԾ
ՄԱՆԿԱՏՈՒՆ»
ՊՈԱԿ

REPUBLIC OF ARMENIA MINISTRY
OF LABOUR AND SOCIAL ISSUES
"SPECIALIZED
CHILDREN'S
HOME OF KHARBERD"
SNCO

<<20>> սեպտեմբեր 2024թ

Մասիսի տեղական գանձ.բաժանմունք
հ/հ 900438000318

ՀՀ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ
ՀԱՐՑԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ
ՔԱՐՏՈՒՂԱՐ ՊԱՐՈՆ Ս.ՄՈՒՐԱԴՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Մուրադյան.

Հայտնում եմ Ձեզ այն մասին , որ դեռևս 20.12.2023թվականին ՀՀ Աշխատանքի և Սոցիալական հարցերի նախարարության /ի դեմս Ս.Մուրադյանի/ և «Սավա» ՍՊԸ-ի միջև կնքվել է «Խարբերդի մասնագիտացված մանկատուն» ՊՈԱԿ-ի կարիքների համար սննդամթերքի մատակարարման պայմանագիր «ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ԷԱՃԱՊՁԲ-24/4-ԵԽ-5-Խ ծածկագրով:

Համաձայն վերը նշված պայմանագրի 1.1 կետի պահանջների սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով «Խարբերդի մասնագիտացված մանկատուն» ՊՈԱԿ-ին /Գնորդին/ «Սավա» ՍՊԸ-ն /Վաճառողը/ պետք է մատակարարեր պայմանագրի հավելվածով և տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացույցով նախատեսված ապրանքները,մասնավորապես,սոխ,լոբի կանաչ, սմբուկ,կարմիր բազուկի տերև, շաքարավազ, ջեմ, մուրաբա, խավիար սմբուկի,աղ կերակրի, ոլոռ,եգիպտացորեն պահածոյացված,լոբի հատիկ, հաճար, բլղուր.մեղր,ոսպ և բրինձ/տես պայմանագրին կից տեխնիկական բնութագիրը/, իսկ «Խարբերդի մասնագիտացված մանկատուն» ՊՈԱԿ-ը պարտավորվում է ընդունել ապրանքները ու վճարել դրանց համար/տես պայմանագրի առարկան 1.1կետը/:

Հայտնում եմ, որ «Խարբերդի մասնագիտացված մանկատուն»ՊՈԱԿ-ի պատասխանատու անձի կողմից կազմվել են հայտեր,արձանագրություններ և դրանցով սահմանվել են ժամկետներ տեխնիկական բնութագրով սահմանված սննդամթերքները սահմանված ժամկետներում մատակարարելու

վերաբերյալ,սակայն «Մավա» ՍՊԸ-ի կողմից չեն պահպանվում պայմանագրով սահմանված էական պայմանները, մասնավորապես,վերը թվարկված բոլոր ապրանքները,բացառությամբ բնական հյութի/հյութ մրգերի/,քանի որ 2024թվականի օգոստոսի 30-ին արդեն իսկ միակողմանի լուծվել էր պայմանագիրը. «Վաճառող» կողմը մնացած մասով պետք է շարունակեր մատակարարել պայմանագրով սահմանված և վերը թվարկված ապրանքները:

Հիմք ընդունելով այն փաստական հանգամանքը, որ մնացած ապրանքները չեն մատակարարվել, դրանք են՝ սոխ,լոբի կանաչ, սմբուկ,կարմիր բազուկի տերև, շաքարավազ, ջեմ, մուրաբա, խավիար սմբուկի,աղ կերակրի, ոլոռ,եգիպտացորեն պահածոյացված,լոբի հատիկ, հաճար, բլղուր.մեղր,ոսպ և բրինձ սահմանված ժամկետներում/տես՝ կից ներկայացվող հայտերը և արձանագրությունները/,ուստի ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «ԱՄՀՆ-ՊՈԱԿ-ԷԱՃԱՊՁԲ-24/4-ԵԽ-5-Խ ծածկագրով կնքված պայմանագրի էական պահանջներից, անհրաժեշտություն է առաջացել արդեն ամբողջությամբ լուծելու 20.12.2023թվականին /««Խարբերդի մասնագիտացված մանկատուն»ՊՈԱԿ-ի կարիքների համար սննդամթերքի մատակարարման «ԱՄՀՆ-ՊՈԱԿ-ԷԱՃԱՊՁԲ-24/4-ԵԽ-5-Խ ծածկագրով պայմանագիրը:

Կից ներկայացվում է պայմանագիրը լուծելու մասին որոշումը:

Առդիր՝ որոշումը /2թերթ/:

ՏՆՕՐԵՆԻ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ
ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ ՌՈՒԶԱՆՆԱ ԱՍԼԱՆՅԱՆ

Արարատի մարզ, գ. Նոր-Խարբերդ
0236 6 00 25 (Մասիս) (Նոր Խարբերդ)
091 42 79 60
Էլ.հասցե՝ kharberd-mankatun@mail.ru

Ararat Marz, Nor Kharberd
0236 6 00 25 (Masis) (Nor Kharberd)
091 42 79 60
e-mail: kharberd-mankatun@mail.ru